

Վարժական հավաքներ հայտարարելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2019 թվականի N - Ն

ՎԱՐՇԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ 40 օր ժամկետով՝ 2019 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 30-ը:

2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավվել ընդհանուր թվով 316 քաղաքացու, որոնցից 220-ը՝ շարքային կազմի, 12-ը՝ ենթասպայական կազմի, 84-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

4. Սահմանել, որ վարժական հավաքներում ներգրավվում են՝

1) հրթիռահրետանային մասնագիտություններով՝ 159 պահեստազորային, որոնցից՝

ա. 82 պահեստազորային՝ 2019 թվականի նոյեմբերի 12-18-ը ներառյալ.

բ. 8 պահեստազորային՝ 2019 թվականի նոյեմբերի 12-21-ը ներառյալ.

գ. 47 պահեստազորային՝ 2019 թվականի նոյեմբերի 14-20-ը ներառյալ.

դ. 22 պահեստազորային՝ 2019 թվականի նոյեմբերի 19-28-ը ներառյալ,

2) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով՝ 6
պահեստազորային՝ 2019 թվականի նոյեմբերի 18-24-ը ներառյալ,

3) կապի մասնագիտություններով՝ 23 պահեստազորային՝ 2019 թվականի
նոյեմբերի 6-12-ը ներառյալ,

4) հետախուզական մասնագիտություններով՝ 95 պահեստազորային,
որոնցից՝

ա. 44 պահեստազորային՝ 2019 թվականի հոկտեմբերի 22-31-ը ներառյալ.

բ. 6 պահեստազորային՝ 2019 թվականի նոյեմբերի 19-25-ը ներառյալ.

գ. 45 պահեստազորային՝ 2019 թվականի նոյեմբերի 19-28-ը ներառյալ,

5) տեխնիկական մասնագիտություններով՝ 33 պահեստազորային՝ 2019
թվականի նոյեմբերի 4-10-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019թ.

Երևան